

## Սևաբերդ գյուղ, Վարչական ղեկավար՝ Հակոբ Բաբայան

### Սևաբերդի մասին

գյուղում գործում են 1 դպրոց, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:  
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2058 մ

Բնակչությունը -265

հեռավորությունը մայրաքաղաքից՝ 20կմ

հեռավորությունը մարզկենտրոնից՝ 44 կմ

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղ Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջին, Աբովյանից 20 կմ հյուսիս-արևելք: Գյուղից 5կմ հարավ, 2010մ բարձրության վրա, գետառի ավազանում է գտնվում Սևաբերդի ջրամբարը, որի հայելու մակերեսը 50հա է, խորությունը՝ 37մ.: Համայնքը գտնվում է Գեղամա լեռների ստորոտում : Համաձայն ՀՀ վարչապետի 20.10.1997թ. թիվ 493 հորոշման՝ գյուղը մտել է ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի շարքը: Բնակչությունը հիմնականում 1915թ. Արևմտյան Հայաստանից բռնագաղթված հայեր են՝ Մշո, Էրզրումի, Ալաշկերտի գավառներից: Նախկինում գյուղում բնակվել են թուրքեր և այն կոչվելիս է եղել Ղարաղալա, որը նշանակում է Սևաբերդ: Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակմամբ:

Բաշապարանի հերոսամարտի հաղթական ելքին: Տեր Զաքարը 1915թ առաջադրվում է Երևանի գավառի հայ գաղթականներին օգնելու և տեղավորելու կոմիտեի նախագահ արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանի տեղակալ: Նրա գործադրած ջանքերի շնորհիվ հայ գաղթականները դուրս եկան ծանր վիճակից և ունեցան իրենց սեփական տեսությունները: Նոր գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1430մ բարձրության վրա, հեռավորությունը Երևանից 16կմ, մարզկենտրոնից 35կմ, բնակլիմայական պայմանները նախալեռնային, գյուղի տնտեսությունը 440 է, բնակչությունը 1600 մարդ: Պատերազմի ավարտից հետո տարիներ անց գյուղի կենտրոնական փողոցում կառուցվեց Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող: Գյուղում է ծնվել ԽՍՀՄ հերոս Հրանտ Բաբայանը: Նոր գյուղ համայնքն զբաղեցնում է 2070հա հողատարածք, ունի արոտավայրեր, վարելահողեր: Գյուղի ազգաբնակչության հիմնական ուղղվածությունը եղել է անասնապահությունն ու հողագործությունը, գյուղում պահպանվել է 19-րդ դարի եկեղեցի, որը մասնակի վերանորոգվել է, կահավորվել: 1998թվականի հոկտեմբեր ամսին օծվել է: Գյուղն ապահովված է խմելու և ոռոգման ջրով, գազաֆիկացված է, անցկացված է հեռախոսակապ: Գյուղն ունի բուժկետ: